

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի

Որոշում N 1/237Ա

06/05/2020

**«ԴԻԼԻՋԱՆ ՖԱՅՆԵՆՍ Բ. Վ.» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն 2020 թվականի ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել «ԴԻԼԻՋԱՆ ՖԱՅՆԵՆՍ Բ. Վ.»-ի կողմից թողարկված՝ **300,000,000 ԱՄՆ դոլար ծավալով, 28/01/2025 թվականին մարման ժամկետով, 1,000 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 200,000 ԱՄՆ դոլար գործարքի նվազագույն ծավալով, 6.5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ փոխառության մասնակցության արժեկտրոնային պարտավորումների առևտրի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան առևտրի ազդագիրը՝ կազմված հայերեն լեզվով ամփոփաթերթից և Իռլանդիայի կենտրոնական բանկում գրանցված ազդագրից, և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:**

Արդշինբանկը խնդրել է նաև թույլատրել ազդագիրը հրապարակել անգլերեն լեզվով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 19-րդ և 119-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի ապրիլի 29-ի թիվ 20 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գրանցել «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից 2020 թվականի ապրիլի 22-ին ներկայացված «ԴԻԼԻՋԱՆ ՖԱՅՆԵՆՍ Բ. Վ.»-ի արժեկտրոնային պարտատոմսերի առևտրի ազդագիրը:
2. Թույլատրել ազդագիրը հրապարակել անգլերեն լեզվով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ